



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 դեկտեմբերի 2016թ. թիվ 538-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԿԱՐԳ  
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.22 կետով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի ժամանակավոր պաշտոնակատարի 23.12.2016թ. N 8/17.8/14737-16 գրությունը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2017 թվականի հիմնական միջոցառումների պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Կ.Հովհաննիսյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

2016թ. դեկտեմբերի 27  
ք.Վանաձոր

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ